

## Տ. ՋԳՈՆ ՔԱՀԱՆԱ ԱՆՏՈՆՅԱՆ

(ավազանի անունը՝ Հովհաննես)

Ծնվել է 1961 թ. Երևանում:

1968-1978 թթ. սովորել է Երևանի Հակոբ Պարոնյանի անվան միջնակարգ դպրոցում:

1979-1981 թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1981-1983 թթ. աշխատել է Երևանի Ռելեի գործարանում:

1983-1989 թթ. սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

1989 թ. մայիսի 7-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի:

1989-1991 թթ. Վեհափառ Հայրապետի բարձր փնօրհնությամբ ծառայել է Ալեք Մանուկյան գանձապանը:

1990 թ. պաշտպանել է ավարտաճառ «Հայ Կաթոլիկ հարաբերությունները. 17-րդ դարի վերջ - 18-րդ դարի սկիզբ» թեմայով՝ արժանանալով «քաջալավ» գնահատականի:

1991-1992 թթ. ծառայության է անցել Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում՝ իբրև վերակացու և Քրիստոնեական առարկայի դասախոս:

1992-1997 թթ. ծառայել է Արգենտինահայոց թեմում:

1992-1994 թթ. սովորել է Բուենոս Այրեսի կաթոլիկ համալսարանի (Ս. C. A.) աստվածաբանության ֆակուլտետում, ինչպես նաև աշխատել է Վիսենտե Լոպեսի

(Բուենոս Այրես) հայոց վարժարանում, որպես Հայ ժողովրդի պատմության և կրոնագիտության ուսուցիչ:

1997 թ. վերադարձել է Հայաստան:

2000-2001 թթ. ծառայել է Արարատյան Հայրապետական թեմի ՔԴՔԿ-ում որպես ուսուցիչ:

2002 թ. աշխատում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում որպես Հին Կտակարանի ներածություն առարկայի դասախոս:

2002 թ. ապրիլի 28-ին, Սուրբ Խաչի երևման տոնին, ձեռամբ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի ձեռնադրվել է քահանա: